


«ՎԵՈՆԻԱ ԶՈՆԻ» ՓԲԸ

ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ

- 1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում
- 1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում
- 1.3. Ջրահեռացման համակարգ
- 1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում
- 1.5. Էներգոհամակարգ
- 1.6. Մեքենա-մեխանիզմներ

2. Առևտրային տնօրինություններ

- 2.1. Բաժանորդների տվյալներ
- 2.2. Հասույթ
- 2.3. Գանձում
- 2.4. Դեբիտորական պարտքեր
- 2.5. Ջրաչափեր
- 2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում

3. Տեխնիկական տնօրինություն

- 3.1. Ջրամատակարարման շարունակականություն
- 3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում
- 3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ
- 3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ

4. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ

- 4.1. Համակարգչային ցանց
- 4.2. Ինտերակտիվ համակարգ
- 4.3. Բջջային օպերատորներ և ինտերնետ
- 4.4. Նոր սարքավորումներ և ծրագրեր


5. Լրատվական ծառայություն

6. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն

- 6.1. Փաստաթղթերի մշակում
- 6.2. Համագործակցություններ
- 6.3. Արտադրական վտանգավոր օբյեկտների գրանցում/փորձաքննություն
- 6.4. Դասընթացներ
- 6.5. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում



ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





Հաշվետու ժամանակահատվածում Տարածաշրջանների Տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

1.1 Ջրամատակարարման համակարգի կառավարում

Քաղաք Երևան

- Վրացական 6 շենքի միացման վրա հայտնաբերված վթարը վերացնելու նպատակով կառուցվել է D=65մ L=5մ պողպատե ջրագիծ D=100մ թուջե ջրագծի փոխարեն: Կատարված աշխատանքի արդյունքում խնայվել է Q=1լ/վ ջրաքանակ:



Վրացական 6 շենքի ջրամատակարարման սխեմա

- Առինջ գյուղը ստող D=800մ ջրագծի մի հատված անցնում էր շինության տակով գրեթե անհնարին դարձնելով նշված հատվածի սպասարկումը: Վերջինիս L=80մ հատվածը դուրս է բերվել շինության տակից, իսկ փոխարենը կառուցվել D=800մ L=85մ նոր ջրագիծ, ինչի շնորհիվ ոչ միայն ցանցը դարձել է կառավարելի, այլև խնայվել է 2լ/վ ջրաքանակ:



Առինջ գյուղի ջրամատակարարման սխեմա

- «Կենտրոն» տեղամասի և գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում հայտնաբերվել, և ճեղքի գոդման ու եռակցումով անցքերի փակման միջոցով վերացվել են թվով 14 վթարներ, ինչի արդյունքում խնայվել է մոտ 16լ/վ ջրաքանակ:

- Վթարավերականգնողական աշխատանքների շարքում իրականացվել է D=50մ փականի տեղադրում և ջրագծի ճեղքի գոդում Պարոնյան 1 հասցեում, որի արդյունքում խնայվել է 1.5լ/վ ջրաքանակ:

- Նորք Մարաշ վարչական շրջանում իրականացվել է D=150մ թուջե խողովակի խցափակում և կարանահպում, որի արդյունքում խնայվել է մոտ 4լ/վ ջրաքանակ:

- Վթարաորոնողական աշխատանքներ են կատարվել նաև Սարի Թաղի 3 և 7 փողոցների տարածքում, որտեղ ևս խցափակման միջոցով խնայվել է 4լ/վ ջրաքանակ:

- «Էրեբունի» տեղամասի աշխատակիցների կողմից Մուշական 5 փողոցում իրականացվել են D=100մ պողպատե ջրագծի փոխարինման աշխատանքներ: Ջրագծի L=140մ հատվածը



փոխարինվել է $D=110$ մ, իսկ $L=20$ մ հատվածը՝ $D=63$ մ պոլիէթիլենային խողովակներով: Կատարված աշխատանքների արդյունքում բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը:

● «Հարավ» տեղամասի և գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում Մարկվարտի 87, Արտաշիայան 50, Արշակունյաց 50, Ե.Թադևոսյան, Շարուրի փողոցներում, ինչպես նաև «Նաիրիտ» գործարանի դիմաց, համապատասխանաբար $D=80$ մ, $D=100$ մ, $D=32$ մ, $D=32$ մ, $D=50$ մ, $D=150$ մ ջրագծերի վրա հայտնաբերվել և վերացվել է թվով 6 վթար, որի արդյունքում խնայվել է մոտ 6լ/վ ջրաքանակ:



Քաղաք Գյումրի



Չարենց փողոցի ջրամատակարարման սխեմա

● Չարենցի 13 շենքի մոտ $D=150$ մ պողպատե ջրագծից անջատվել է $D=80$ մ $L=30$ մ քայքայված հատվածը և ներարկման միջոցով կառուցվել է $D=32$ մ $L=30$ մ պոլիէթիլենային ջրագիծ: Իրականացված աշխատանքների շնորհիվ հրանավոր է դարձել խնայել $Q=0.8$ լ/վ ջրաքանակ և խուսափել հետագա վթարներից:

● Իսահակյան փողոցը սնուցող $D=250$ մ թուջե ջրագծից Իսահակյան 5 շենքի մոտ անջատվել է $D=80$ մ $L=120$ մ պողպատե խողովակ, որը գտնվում էր քայքայված վիճակում: Աշխատանքների արդյունքում խնայված $Q=1.1$ լ/վ ջրաքանակն ուղղվել է փողոցի ջրամատակարարման բարելավմանը՝ բարձրացնելով շենքերում ջրի ճնշումը:



Իսահակյան փողոցի ջրամատակարարման սխեմա



Իսահակյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Իսահակյան 9 շենքի մոտ $D=250$ մ թուջե ջրագծից անջատվել է $D=50$ մ $L=200$ մ քայքայված ջրագիծը, ինչի արդյունքում խնայված $Q=2.8$ լ/վ ջրաքանակն ուղղվել է շենքի ջրամատակարարման բարելավմանը՝ բարձրացնելով տեղի ջրի ճնշումը:

● Կ.Դեմիրճյան 8 շենքի մոտով անցնող $D=100$ մմ ջրագծից անջատվել է $D=40$ մմ $L=70$ մ քայքայված ջրագիծ, ինչի արդյունքում խնայված $Q=0.8$ լ/վ ջրաքանակն ուղղվել է փողոցի ջրամատակարարման բարելավմանը՝ բարձրացնելով տեղի ջրի ճնշումը:



Կ. Դեմիրճյան փողոցի ջրամատակարարման սխեմա



Ղանդիլյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Երկաթգծի կայարանամերձ հատվածում, որտեղ նախկինում շինարարական կազմակերպության կողմից իրականացվել էին վերակառուցման աշխատանքներ, կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հին ցանցը չի անջատվել: Այն հանելու նպատակով $D=600$ մմ օղակային ջրագծից անջատվել են $D=300$ մմ $L=2300$ մ, $D=200$ մմ $L=2000$ մ և $D=150$ մմ $L=800$ մ հին ջրագծերը: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է 12 լ/վ ջրաքանակ, ցանցը դարձել է կառավարելի, կրճատվել է տեղի վթարների առաջացման հավանականությունը և բարելավվել է քաղաքի նշված հատվածի ջրամատակարարումը:



Կայարանամերձ հատվածի ջրամատակարարման սխեմա



Շիրակացի 61 թաղ.-ի ջրամատակարարման սխեմա

● Շիրակացի փողոցում շահագործումից հանվել է $D=100$ մմ $L=100$ մ և $D=50$ մմ $L=35$ մ պողպատե ջրագիծ, իսկ փոխարենը ներարկվել է $D=32$ մմ $L=35$ մ պոլիէթիլենային ջրագիծ: Կատարված աշխատանքների արդյունքում խնայվել է 1 լ/վ ջրաքանակ և բարելավվել նշյալ փողոցի ջրամատակարարումը լուծելով ցածր ճնշման հետ կապված ցանցում առկա խնդիրները:

● Կոմիտասի փողոցում շահագործումից հանվել է $D=100$ մ $L=30$ մ թուջե ջրագիծ, որը Փանյան փողոցից անցնում էր դեպի Կոմիտաս փողոց: Աշխատանքների արդյունքում խնայված $Q=0.7$ լ/վ ջրաքանակն ուղղվել է տեղի ջրամատակարարման բարելավմանը՝ բարձրացնելով փողոցում ջրի ճնշումը:



Կոմիտաս փողոցի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Վանաձոր

● Լենինգրադյան փողոցի տնակային ավանի սնուցումն իրականացվում էր $D=300$ մ $L=600$ մ թուջե վթարային ջրագծից: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հնարավոր է շահագործումից հանել $D=300$ մ $L=600$ մ ջրագիծը, իսկ տնակային ավանի ջրամատակարարումը 7 ճնշումային գոտուց ապահովելու համար կառուցել նոր $D=50$ մ $L=4$ մ ջրագիծ: Ձեռնարկված աշխատանքների ավարտին խնայվել է 6լ/վ ջրաքանակ:




Լենինգրադյան փողոցի տնակային ավանի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Էջմիածին


Դոդա, Ամբերդ, Արագած և Ծաղկալանջ գյուղերը սնուցող ջրատարի վրա կատարված բազմաթիվ չափումների և ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ այդ ջրագիծը վթարային է, այն անցնում է սեփական այգիներով և կառուցապատումների տակով: Բացի այդ, առաջացող վթարները վերացնելու հնարավորություն չկա: Այդ վթարված ջրագծերը շահագործումից հանելու նպատակով կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Դոդա գյուղի համար կառուցվել է $D=160$ մ $L=140$ մ պոլիէթիլենային ջրագիծ,
- Աղաճատուն գյուղի համար կառուցվել է $D=160$ մ $L=770$ մ պոլիէթիլենային ջրագիծ,
- Ամբերդ գյուղի մոտ կառուցվել է $D=150$ մ $L=7$ մ պողպատե ջրագիծ, որը $D=150$ մ փականով միացվել է շահագործվող $D=400$ մ ջրագծին,
- Հայտնաբերվել և խցափակվել են $D=400$ մ և $D=300$ մ ջրագծերի միջև միջանկյալ միացումներ: Աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $D=300$ մ $L=5000$ մ թուջե և $D=150$ մ $L=5800$ մ պողպատե ջրագծեր:
- Կատարված աշխատանքների արդյունքում խնայվել է $Q=20$ լ/վ ջրաքանակ, որն ուղղվել է Էջմիածին քաղաքի ջրամատակարարման բարելավմանը, իսկ վերոնշյալ համայնքների ցանցը դարձել է ավելի կառավարելի:



Դոդա, Ամբերդ, Արագած, Ծաղկալանջ գյուղերի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Արմավիր



● Քաղաքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում Մաշտոցի 88 և Մայաթ-Նովա փողոցներում, համապատասխանաբար՝ D=50մմ և D=100մմ ջրագծերի վրա հայտնաբերվել և ճեղքի զողման միջոցով վերացվել է թվով 2 վթար, խնայվել է մոտ 4լ/վ ջրաքանակ:

Քաղաք Դիլիջան

● Արուլյան փողոցում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում հայտնաբերվել է D=250մմ պողպատե ջրագծի վթար, որը վերացվել է ճեղքի եռակցման միջոցով: Վթարի վերացման արդյունքում խնայվել է մոտ 2լ/վ ջրաքանակ, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը:

Քաղաք Արտաշատ

● Այվագովսկի փողոցում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում D=110մմ ջրագծի վրա հայտնաբերվել և վերացվել է վթար, խնայվել է մոտ 1լ/վ ջրաքանակ:



Քաղաք Սևան

● Նաիրյան փողոցում՝ «Արարատ» ռեստորանային համալիրի դիմաց, իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում D=100մմ ջրագծի վրա հայտնաբերվել և ճեղքի զողման միջոցով վերացվել է վթար, որի արդյունքում խնայվել է մոտ 6.5լ/վ ջրաքանակ:



Քաղաք Մասիս


● 10-րդ փողոցում իրականացված վթարավերականգնողական աշխատանքների շրջանակներում D=100մմ խողովակի վրա հայտնաբերվել և վերացվել է վթար, խնայվել է մոտ 2 ր/վ ջրաքանակ:

Քաղաք Արարատ

● «Ջերմանիս-Վեդի» D=250մմ ջրագծի վրա իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում հայտնաբերվել և վերացվել է թվով 3 վթար, խնայվել է մոտ 6լ/վ ջրաքանակ:

Քաղաք Գավառ

● Գավառ քաղաքը և Նորատուս համայնքը սնող D=300մմ ջրագծի վրա առաջացել էր մեծ ջրակորուստով խոշոր վթար հարուցելով նշված բնակավայրերի ջրամատակարարման ընդհատում: «Գավառ» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացված օպերատիվ վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում կատարվել է ճեղքի զոդում, վթարը վերացվել է կարճ ժամանակում: Կատարված աշխատանքների արդյունքում վերականգնվել է ջրամատակարարման շարունակականությունը, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը:




Քաղաք Սպիտակ

● Ս.Ավետիսյան փողոցով անցնող պողպատե երկու հին ջրագծերը շահագործումից հանելու նպատակով կառուցվել է D=63մմ L=150մ և D=32մմ L=70մ պոլիէթիլենային ջրագիծ: Աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել են D=80մմ L=150մ և D=40մմ L=70մ հնամաշ ջրագծերը՝ խնայվելով Q=2լ/վ ջրաքանակ:



Ս.Ավետիսյան փողոցի ջրամատակարարման սխեմա



Քաղաքի գերեզմանների մոտ գտնվող թաղամասի ջրամատակարարման սխեմա


● Քաղաքային գերեզմանների մոտ գտնվող թաղամասում կատարած չափումներն ու ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առանձնատների թաղամասը սնուցող D=50մմ ջրագիծը անցնում է տեղի գերեզմանների տակով: Ջրագիծը գերեզմանների տարածքից դուրս բերելու նպատակով կառուցվել է D=32մմ L=100մ պոլիէթիլենային ջրագիծ, որի ջրաչափական դիտահորերը ջրաչափական հանգույցներով տեղափոխվել են սահմանագատման կետեր: Իրականացված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է D=50մմ L=400մ ջրագիծ, խնայվել Q=1.5լ/վ ջրաքանակ, վերացել են ապօրինությունները, ինչպես նաև ավելացել է ջրի վաճառքից գանձվող հասույթը:

Քաղաք Մարտունի

● Երևանյան 42 շենքի ջրամատակարարումն իրականացվում էր $D=100$ մմ ամբողջովին քայքայված և վթարային վիճակում գտնվող ջրագծով, որը շահագործվում էր 1970-ական թվականներից: Վերոնշյալ ջրագիծը խաչված էր կոյուղատարի հետ և չէր համապատասխանում տեխնիկական նորմերին՝ հարուցելով խոշոր վթարներ: Վթարային վիճակը վերացնելու նպատակով «Մարտունի» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացված վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում $D=100$ մմ մետաղական ջրագծի $L=120$ մ հատվածը փոխարինվել է նոր՝ $D=63$ մմ պոլիէթիլենային ջրագծով: Արդյունքում խնայվել է 3 լ/վ ջրաքանակ:



Քաղաք Բերդ



Վարդանանց փողոցի ջրամատակարարման սխեմա

● Վարդանանց փողոցի մի քանի բաժանորդների սնուցումը թուջե վթարային ջրագծից անջատելու և նոր ցանցին միացնելու համար կառուցվել է $D=32$ մմ $L=60$ մ պոլիէթիլենային ջրագիծ՝ շահագործումից հանելով $D=150$ մմ $L=120$ մ ջրագիծը: Աշխատանքների արդյունքում վերացել են գաղտնի վթարները և բարելավվել է բաժանորդների ջրամատակարարումը:

Քաղաք Ծաղկաձոր


● Քաղաքի $W=1000$ իսմ ՕԿՁ-ն սնող $D=150$ մմ ջրագծի մի հատվածի տրամագիծը փոքր էր և առաջացնում էր տեղային դիմադրություն, ինչն էլ իր հերթին ազդում էր ջրաքանակի ավելացման վրա: $D=12$ մ $L=75$ մ պողպատե ջրագիծը շահագործումից հանելու նպատակով կառուցվել է $D=150$ մմ $L=12$ մ նոր ջրագիծ: Արդյունքում վերացել են տեղային դիմադրությունները և ավելացել է ՕԿՁ լցվող ջրաքանակը:



Ծաղկաձոր քաղաքի ջրամատակարարման սխեմա

Վարդաբլուր համայնք

● Համայնքը սնող $D=90$ մ $L=800$ մ ջրագիծը գտնվում էր քայքայված վիճակում և վերանորոգման ենթակա չէր: Ջրագիծը շահագործումից հանելու նպատակով կառուցվել է $D=160$ մ $L=800$ մ պոլիէթիլենային ջրագիծ, ինչի արդյունքում խնայվել է 4 լ/վ ջրաքանակ և բարելավվել համայնքի ջրամատակարարումը, իսկ հետագայում տվյալ ջրագիծը կարող է օգտագործվել նաև Հոբարձի համայնքի ջրամատակարարումն իրականացնելու համար: Բացի այդ, Վարդաբլուր գյուղի ներքին ցանցում կառուցվել են նաև $D=63$ մ $L=25$ մ, $D=50$ մ $L=150$ մ, $D=40$ մ $L=22$ մ և $D=32$ մ $L=100$ մ պոլիէթիլենային ջրագծեր:



Վարդաբլուր գյուղի ջրամատակարարման սխեմա

Գյուլագարակ համայնք

● Համայնքում կառուցվել են $D=63$ մ $L=15$ մ և $D=32$ մ $L=80$ մ պոլիէթիլենային ջրագծեր: Աշխատանքների արդյունքում խնայված 3 լ/վ ջրաքանակն ուղղվել է Գյուլագարակ համայնքի ջրամատակարարման բարելավմանը:



Գյուլագարակ գյուղի ջրամատակարարման սխեմա

Ալափարս համայնք

● Ալափարս համայնքը սնող $D=50$ մ $L=130$ մ պողպատե ջրագիծը վթարված էր և պիտանի չէր հետագա շահագործման համար: Այն շահագործումից հանելու նպատակով կառուցվել է $D=50$ մ $L=130$ մ պոլիէթիլենային ջրագիծ, ինչի արդյունքում խնայվել է 2 լ/վ ջրաքանակ:



Ալափարս գյուղի ջրամատակարարման սխեմա

Հոբարձի համայնք

● Հաճախակի կրկնվող վթարները վերացնելու և քայքայված ջրագծերը շահագործումից հանելու նպատակով Հոբարձի համայնքում կառուցվել են $D=63$ մ $L=192$ մ, $D=90$ մ $L=18$ մ պոլիէթիլենային և $D=100$ մ $L=18$ մ, $D=90$ մ $L=6$ մ պողպատե ջրագծեր: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է $Q=3.6$ լ/վ ջրաքանակ՝ զգալիորեն բարելավելով Հոբարձի համայնքի ջրամատակարարումը:



Հոբարձի գյուղի ջրամատակարարման սխեմա


Ախուրյան համայնք

● Համայնքի «Մոր և մանկան» բժշկական կենտրոնի $D=100$ մ ջրագծից անջատվել է $D=40$ մ $L=700$ մ պողպատե ջրագիծ, ինչի արդյունքում խնայվել է $Q=1.2$ լ/վ ջրաքանակ և բարելավվել հիվանդանոցի ջրամատակարարումը:



Ախուրյանի Մոր և մանկան հիվանդանոցի ջրամատակարարման սխեմա

Օշական համայնք



● Օշականը սնող երկու ջրագծերից մեկը գտնվում էր վթարային վիճակում: Փորձերի և ուսումնասիրությունների արդյունքում պարզ էր դարձել, որ հնարավոր է Օշականի ջրամատակարարումն իրականացնել մեկ ընդհանուր ջրագծով: $D=300$ մ $L=3240$ մ թուջե վթարված ջրագիծը շահագործումից հանելու արդյունքում խնայվել է 10 լ/վ ջրաքանակ, որն ուղղվել է գյուղի ջրամատակարարման բարելավմանը, կրճատվել է ապօրինի ջրամիացումների քանակը:

Օշական գյուղի ջրամատակարարման սխեմա

Նորաշեն համայնք

● Նորաշեն համայնքում իրականացված վթարա-որոնողական աշխատանքների շրջանակներում՝ $D=100$ մ, $D=50$ մ, $D=32$ մ ջրագծերի վրա հայտնաբերվել և վերացվել է թվով 5 վթար, ինչը հանգեցրել է 2.5 լ/վ ջրաքանակի խնայողության:



Վարսեր համայնք

● Երևանյան և 13 փողոցներում $D=80$ մ և $D=100$ մ ջրագծերի վրա հայտնաբերվել և ճեղքի գոդման միջոցով վերացվել է թվով 2 վթար, խնայվել է 15 լ/վ ջրաքանակ:

Դաշտաքար համայնք

● Կենտրոնական փողոցը սնուցող $D=100$ մ $L=700$ մ ջրագիծը, որն անցկացվել էր նախկին ջրամատակարար կազմակերպության կողմից անորակ պոլիէթիլենային խողովակներով, ամբողջությամբ դեֆորմացվել էր և պիտանի չէր հետագա շահագործման համար: Վնասված էին նաև ջրագծից սնվող թվով 32 բաժանորդների անհատական միացումները, ինչը հանգեցնում էր հաճախակի մեծ ջրակորուստներով վթարների առաջացմանը: «Արարատ» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել է վերոնշյալ՝ $D=100$ մ ջրագծի փոխարինման աշխատանքներ: Ջրագծի $L=400$ մ հատվածը փոխարինվել է $D=90$ մ, իսկ մնացած՝ $L=300$ մ հատվածը $D=75$ մ պոլիէթիլենային խողովակով:





Փոխարինվել են նաև բաժանորդների անհատական միացումները՝ $D=20$ մ, ընդհանուր երկարությունը՝ $L=200$ մ, 32 բաժանորդների ջրամիացման կետերին կից կառուցվել են ջրաչափական դիտահորեր: Կատարված աշխատանքների արդյունքում ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, խնայվել է ջրաքանակ, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը:

Փորր Վեղի համայնք

● Համայնքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում դպրոցի մոտ, Դուրյան, Դ. Բեկ և Ստեփանյան փողոցներում, համապատասխանաբար $D=50$ մ, $D=75$ մ, $D=80$ մ, $D=50$ մ ջրագծերի վրա հայտնաբերվել և վերացվել է թվով 4 վթար, խնայվել է մոտ 5.5լ/վ ջրաքանակ:



Տափերական համայնք

● Տափերական համայնքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում Սարյան, Թամանցիներ և Կենտրոնական փողոցներում, համապատասխանաբար $D=100$ մ, $D=32$ մ, $D=100$ մ ջրագծերի վրա հայտնաբերվել և վերացվել է թվով 3 վթար, խնայվել է մոտ 3լ/վ ջրաքանակ:



Նոր Կյանք համայնք

● Համայնքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում Թումանյան փողոցում $D=100$ մ ջրագծի վրա գողման միջոցով վերացվել է ջրակորուստով վթար, խնայվել է մոտ 3լ/վ ջրաքանակ:



Գինևետ համայնք

● Կատարված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում Տիգրան Մեծ փողոցի 1-ին և 3-րդ տների դիմաց և դաշտի մեջ, համապատասխանաբար $D=32$ մմ, $D=32$ մմ, $D=80$ մմ ջրագծերի վրա հայտնաբերվել և վերացվել է թվով 3 վթար: Արդյունքում խնայվել է մոտ 4լ/վ ջրաքանակ:

Գառնի համայնք

● «Արտաշատ» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող «Գառնի-Լանջազատ» և «Գառնի-Խարբերդ» ջրատարները, որոնք սնում են Արարատի մարզը, ուսումնասիրվել են գոտիավորման խմբի, «Արտաշատ» շահագործման տեղամասի և առևտրային տնօրինության վերահսկողության խմբի աշխատակիցների համատեղ ուժերով:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վերոնշյալ ջրատարների վրա առկա են թվով 17 ապօրինի միացումներ: Ուսումնասիրություն է կատարվել նաև Գառնի Բանավանի բնակելի շենքերի տարածքում, որի արդյունքում հայտնաբերվել են հարակից հողամասերը սնող ռետինե խողովակներ ապօրինի միացված ջրատարին: Կատարված աշխատանքների արդյունքում վերացվել են առկա ապօրինի միացումները, կանխվել է չհաշվառվող ջրի անօրինական ծախսը, խնայվել է մոտ 16լ/վ ջրաքանակ:



Արայեզ համայնք

● Համայնքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում Շահումյան փողոցում $D=100$ մմ ջրագծի վրա հայտնաբերվել է թվով 2 վթար, թուջե ջրագծի կարանահպման միջոցով կանխվել է ջրակորուստը, խնայվել է մոտ 1.5լ/վ ջրաքանակ:

Ջրաշեն համայնք

● «Էրեբունի» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել է տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Արարատի մարզի Ջրաշեն համայնքի Հ. Բաղդամյան փողոցում դեռևս մայիս ամսին սկսված, $D=100$ մմ վթարված պողպատե ջրագծի փոխարինման աշխատանքները: Քայքայված ջրագծի վրա, որից սնվում էր թվով 27 բաժանորդ, առկա էր բազմաթիվ վթարներ և ապօրինի միացումներ:

Վերոնշյալ փողոցի ջրամատակարարման բարելավման և ապօրինի միացումների բացառման համար տեղամասի և գյուղապետարանի համատեղ ուժերով $D=100$ մմ պողպատե ջրագծի $L=650$ մ հատվածը փոխարինվել է նոր՝ $D=110$ մմ պոլիէթիլենային ջրագծով, 27 բաժանորդների ջրամիացման կետերին կից կառուցվել են ջրաչափական դիտահորեր և տեղադրվել նոր ջրաչափեր:

Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է ջրամատակարարումը, բացառվել են ապօրինի միացումները, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը:



Գետափնյա համայնք

● Համայնքում իրականացված վթարա-որոնողական աշխատանքների ընթացքում, D=160մմ պոլիէթիլենային ջրագծի վրա հայտնաբերվել և վերացվել է վթար, ինչպիսիք է մոտ 2լ/վ ջրաքանակ:



Կանաչուտ համայնք

● Պ. Սևակ և Սարգսյան փողոցներում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում D=160մմ ջրագծերի վրա հայտնաբերվել և վերացվել է թվով 3 վթար, որի արդյունքում կատարվել է 3լ/վ ջրաքանակի խնայողություն:



Մրգավան, Վերին Դվին և Քաղցրաշեն համայնքներ



● «Արարատ» տեղամասի և գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից վթարաորոնողական աշխատանքներ են իրականացվել Մրգավան, Վերին Դվին և Քաղցրաշեն համայնքներում, որտեղ, համապատասխանաբար՝ D=50մմ, D=100մմ և D=50մմ ջրագծերի վրա հայտնաբերվել և վերացվել են մի շարք վթարներ, ինչի շնորհիվ ընդհանուր առմամբ խնայվել է 3լ/վ ջրաքանակ:

Ներքին Դվին համայնք

● Իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում ձեռքերի գոդման աշխատանքներ են կատարվել D=150մմ ջրագծի վրա, ինչպես նաև դետալների հավաքակցման աշխատանքներ են իրականացվել է D=63մմ ջրագծի վրա: Վերացված վթարների շնորհիվ խնայվել է մոտ 3 լ/վ ջրաքանակ:

Դալար համայնք

● Վթարաորոնողական աշխատանքներ են կատարվել Մանուկյան և Մարգայան փողոցներում, որտեղ, համապատասխանաբար՝ D=110մմ և D=25մմ ջրագծերի վրա հայտնաբերվել և վերացվել են թվով 2 վթար, ինչի արդյունքում խնայվել է մոտ 2լ/վ ջրաքանակ:



Նորաշեն համայնք

● Համայնքի դաշտամիջյան հատվածում անցքերի գողման աշխատանքներ են կատարվել «Գառնի-Երասխ» D=500մմ ջրատարի վրա, որի արդյունքում կանխվել է 2լ/վ ջրակորուստ



Ծղուկ համայնք

● «Միսիան» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող «Մուխուրթուրյան-Գորիս» D=500մմ ջրատարը, որը սնում է Սպանդարյան, Իշխանասար, Աշոտավան և Հացավան համայնքները, գտնվում էր խիստ վթարային վիճակում: «Միսիան» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են վթարավերականգնողական աշխատանքներ ջրաղբյուրից մինչև Մառնակունք համայնքի վարչական տարածքն ընկած հատվածում: Աշխատելով դժվարամատչելի ռելիեֆում և անբարենպաստ բնակլիմայական պայմաններում՝ տեղամասի աշխատակիցները վերացրել են թվով 5 խոշոր վթարներ, ինչի արդյունքում ավելացել է մոտ 30լ/վ ջրաքանակ Գորիս քաղաք ուղղված հատվածում:

Հատկանշական է, որ վերոնշյալ աշխատանքներն իրականացվել են առանց ջրամատակարարման դադարի՝ չխաթարելով ջրատարից սնվող համայնքների բնականոն կյանքը: Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է ջրամատակարարումը, բարձրացել է ջրատարի շահագործման հուսալիությունը:



Բաղրամյան և Մյասնիկյան համայնքներ

● Վթարաորոնողական աշխատանքներ են կատարվել նաև Բաղրամյան և Մյասնիկյան համայնքներում, որտեղ ջրագծերի խցափակմամբ վերացվել է թվով 2 վթար, ինայվել է մոտ 4,5լ/վ ջրաքանակ:



Լեռնագոգ համայնք

● Իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում՝ D=100մմ ջրագծի L=20մ հատվածի վրա հայտնաբերվել և եռակցման միջոցով վերացվել է թվով 3 վթար, մոտ 3լ/վ ջրաքանակ:



Ստորև ներկայացվում է հաշվետու ժամանակահատվածում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինությունների կողմից կատարված աշխատանքները աղյուսակային տեսքով:

Աշխատանքների հակիրճ նկարագիրը

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	381
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	14930
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	10325
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	2238
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	355
Շահագործումից հանված ջրագիծ	մ	24368.5
Կառուցված ջրագիծ	մ	2970.9
Կառուցված կոյուղագիծ	մ	342
Վերացված գաղտնի վթարներ	հատ	79
Փոխարինված փական	հատ	196
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	306
Մաքրված դիտահոր	հատ	3952
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	105.12
<i>Վերացված վթարներ</i>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1956
Ջրահեռացման ցանցում	հատ	3941
Պոմպակայաններում	հատ	157
Մաքրված անձրևընդունիչ	հատ	626

Հունիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

h/h	Տեղամաս	Տեղի ունեցած վթարների քանակը		
		Պոլիէթիլենային խողովակներ	Մետաղական խողովակներ	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
1	Արարկիր	0	82	0
2	Զեյթուն	0	58	0
3	Մաշտոց	0	65	0
4	Շահումյան	8	56	0
5	Ալավերդի	3	24	0
6	Բերդ	11	6	0
7	Նոյեմբերյան	28	23	0
8	Իջևան	17	14	0
9	Ստեփանավան	4	32	0
10	Տաշիր	13	3	0
11	Ապարան	3	16	0
12	Լոռի	89	32	0
13	Շիրակ	121	157	0
14	Արթիկ	36	24	0
15	Սպիտակ	11	18	0
16	Թալին	8	13	0
17	Աշոցք	2	8	0
18	Էջմիածին	26	39	0
19	Աշտարակ	21	42	0
20	Հրազդան	0	29	0
21	Չարենցավան	7	17	0
22	Աբովյան	6	18	0
23	Կենտրոն	0	64	9
24	Հյուսիս	3	29	36
25	Հարավ	0	56	15
26	Էրեբունի	10	67	14
27	Արմավիր	3	39	38
28	Արտաշատ	69	42	18
29	Արարատ	43	49	21
30	Մասիս	40	25	28
31	Գավառ	28	8	21
32	Սևան	10	12	22
33	Մարտունի	0	17	1
34	Վարդենիս	0	8	0
35	Ճամբարակ	2	0	1
36	Դիլիջան	8	17	16
37	Վայք	4	2	9
38	Եղեգնաձոր	3	8	22
39	Զերմուկ	2	4	7
40	Սիսիան	9	16	21
41	Գորիս	9	10	13
42	Կապան	24	24	13
43	Մեղրի	0	2	2
	Ընդամենը	681	1275	327



1.2. Ջրաչափերի տեղադրում, փոխարինում և/կամ տեղափոխում

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել տարբեր տրամաչափի ջրաչափեր:

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	35	40	50	65	80	100
Տեղադրված	116	21	7	6	1	4	12	1	4	0
Փոխարինված	51	8	3	13	0	6	7	0	0	0
Տեխ. Ակտ	41	10	1	1	0	0	0	0	0	0
Ընդամենը	208	39	11	20	1	10	19	1	4	0

1.3. Ջրահեռացման համակարգ

Քաղաք Երևան

Սարի թաղ 18 փողոցի D=300մմ թուջե կոյուղագծի տակով հոսում են գրունտային ջրեր, ինչի հետևանքով առաջանում է հողի նստվածք: Սարի Թաղ 18 փողոցի 42-50 տների հարևանությամբ անցնող մոտ L=50մ հատվածում հողի նստվածքի պատճառով առաջացրել էին կոյուղագծերի անթույլատրելի թեթուքյուններ, ինչի հետևանքով կոյուղագծերի միացման հանգույցներից և դիտահորերից առկա էր կոյուղաջրերի արտահոսք, իսկ կոյուղագիծը լցված էր ավազով և աղբով: Կեղտաջրերի հեռացման համակարգը չէր գործում, կոյուղաջրերը հոսում էին բաց տարածքներով, լցվում հարևանությամբ գտնվող տների նկուղները, առաջացնելով հակասանիտարական վիճակ և բնակիչների դժգոհությունը: Խնդրի կարգավորման համար «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից D=300մմ շահագործման համար ոչ պիտանի թուջե կոյուղագծի L=48մ հատվածը փոխարինվել է նույն տրամագծի երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով, հիմնովին վերակառուցվել են թվով 3 և վերանորոգվել են թվով 2 դիտահորեր, կատարվել են կոյուղագծերի անհատական միացումներ և ներկայումս կոյուղագիծը նորմալ շահագործվում է:

«Էրեբունի» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Ագատամարտիկների նրբանցքում իրականացվել են կոյուղագծի փոխարինման աշխատանքներ: Նախկին D=200մմ կերամիկական կոյուղագծի L=24մ հատվածը փոխարինվել է նույն տրամագծի երկշերտ պոլիէթիլենային խողովակով: Իրականացվել է կոյուղու թվով 4 դիտահորերի վերակառուցում լեկալ բետոնյա բլոկներով: Ինչպես նաև վերանորոգվել են դիտահորին միացող D=150մմ կոյուղատար խողովակները:



Քաղաք Մարտունի


● Երևանյան 42 շենքին հարող տարածքում կոյուղագիծը կառուցված էր տեխնիկական նորմերին անհամապատասխան և գտնվում էր քայքայված և վթարային վիճակում: «Մարտունի» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է L=24մ նոր կոյուղագիծ, տեղադրվել է կոյուղու նոր դիտահոր երկաթբետոնե ծածկով:

Կատարված աշխատանքների արդյունքում բարձրացել է կոյուղատար համակարգի շահագործման հուսալիությունը, բացառվել են հաճախակի վթարները:



Ստորև ներկայացվում է ջրահեռացման ցանցում իրականացված աշխատանքների ամփոփ տվյալները:

Աշխատանքների հակիրճ նկարագիրը					
h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում, վթարների վերացում	Անձրևընդունիչների մաքրում	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում
		մ	հատ	հատ	մ
1	Մաշտոց	2035	213	50	21
2	Զեյթուն	11370	293	416	19
3	Շահումյան	1505	147	52	14
4	Արաբկիր	1770	276	85	42
5	Բերդ	360	6	0	0
6	Աշոցք	0	13	0	0
7	Սպիտակ	0	17	0	0
8	Ստեփանավան	150	16	0	11
9	Իջևան	575	46	0	26
10	Նոյեմբերյան	234	53	0	0
11	Շիրակ	150	601	0	16
12	Լոռի	4704	191	0	0
13	Տաշիր	340	9	0	0
14	Թալին	0	19	0	0
15	Ապարան	0	27	0	6
16	Ալավերդի	2370	110	0	0
17	Արթիկ	2500	91	0	0
18	Չարենցավան	1020	63	0	0
19	Հրազդան	1550	88	0	0
20	Էջմիածին	0	139	0	0
21	Աշտարակ	2560	22	0	0
22	Աբովյան	655	62	0	0
23	Կենտրոն	1370	320	20	24
24	Հյուսիս	5100	255	3	0
25	Հարավ	775	290	0	0
26	Էրեբունի	1460	155	0	42
27	Արմավիր	2160	78	0	0
28	Արտաշատ	242	62	0	6
29	Արարատ	0	54	0	0
30	Մասիս	0	43	0	3
31	Գավառ	80	13	0	0
32	Սևան	5480	91	0	81
33	Մարտունի	0	18	0	0
34	Վարդենիս	0	7	0	0
35	Ճամբարակ	160	10	0	0
36	Դիլիջան	2500	40	0	6
37	Վայք	640	11	0	0
38	Եղեգնաձոր	170	8	0	10
39	Զերմուկ	0	19	0	9
40	Սիսիան	1665	90	0	6
41	Գորիս	0	30	0	0
42	Կապան	755	56	0	0
43	Սեղրի	920	48	0	0
	Ընդամենը	57325	4200	626	342



1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի հեռացման և մաքրման կայանների» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- «Մարտունի» ԿՄԿ-ում խցանվել էր յուղի դատարկման պոմպը և մղման խողովակաշարը: Կատարվել է պոմպի միացման մասերի ապամոնտաժում և խցանման մաքրում: Խափանվել էր նաև էլեկտրական կափույրների աշխատանքը, որոնք ևս ապամոնտաժվել և նորոգվել են:

- «Գավառ», «Մարտունի» և «Ջերմուկ» ԿՄԿ-ներում անվտանգությունից ելնելով ձևափոխվել է արտահոսքի ճաղավանդակի դիրքը, քանի որ այն գերհոսքերի ժամանակ խցանվում էր, ինչի արդյունքում կոյուղաջուրը լցվում էր արտադրական մասնաշենք:

- «Գավառ» ԿՊ-ում նորոգվել և վերատեղադրվել է ժնասված գամբուղը և նրա հիմնատակը:

- «Ջերմուկ» ԿՊ-ում այրվել էր պարապ ընթացքի պաշտպանիչ ռելեն, որը փոխարինվել է նորով:


- «Սևան N 3» և «Սևան N 5» ԿՊ-ներում կատարվել է պրոֆիլակտիկ գննում, ստուգվել են էլեկտրական վահանակները և անջատիչները: «Սևան N3»-ում կատարվել է նաև հակադարձ փականների մաքրում:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը՝ թե՛ էլեկտրական, թե՛ մեխանիկական, կատարվել են կարգավորումներ:



Աշխատանքների հակիրճ նկարագիրը

h/h	Գտնվելու վայրը	Կատույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	Ք. Գավառ	«Գավառ»ԿՄԿ	-	63768	21.6
2	Ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	-	84683	14.4
3	Ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	-	177271	5.4
4	Ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	-	202665	8.1
5	Ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	-	132157	18
6	Ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	19285	-	-
7	Ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	11154	-	-
8	Ք. Գավառ	«Գավառ» պ/կ	8600	-	-
9	Ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	13600	-	-
10	Ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	5140	-	-



1.5. Էներգոհամակարգ

Քաղաք Գյումրի


Ղանդիլյան փողոցում և նրա հարակից տարածքներում իրականացրած լայնածավալ գոտիավորման և վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում Ղանդիլյան 22, Ղանդիլյան 28, 28դ, Ղանդիլյան 25, 27ա և Ղանդիլյան 28ա պոմպակայանները ամռան վերջին դուրս կբերվեն շահագործումից և ջրամատակարարումը կիրականացվի ինքնահոս եղանակով: Այս պոմպակայանները ներկա պահին գործարկելու միակ պատճառը ամռան տապն է:

Հաշվետու ժամանակահատվածում SS-ների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է աղյուսակում.

h/h	Հասցեն	Աշխատանքների նկարագիրը
1	Ավետ Ավետիսյան 70-125	Էլ. ավտոմատ անջատիչի կարգավորում 1 հատ
2	Վրացական 6-74	Էլ. ավտոմատ անջատիչի կարգավորում 1 հատ
3	Ադոնցի 17 - 54	Պոմպի վերանորոգում 1 հատ, (գննում)
4	Օրբելի 18 շ.	Պոմպի վերանորոգում 1 հատ, Էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ, (1h վերանորոգման հավաքածու, 2h առանցքակալ, 1h եռաֆազ թողարկիչ)
5	Վ. Համբարձումյանի 8/1 - 103	Ջրագծերում ճնշման չափում և կարգավորում
6	Ազատության 11/1 - 65	Ջրագծերում ճնշման չափում և կարգավորում
7	Արաբկիր 37 փ. 1/1 - 26	Ջրագծերում ճնշման չափում և կարգավորում
8	Ն. Տիգրանյան 19/1 - 54	Էլ. սարքերի գննում կարգավորում
9	Ավետ Ավետիսյան 70 - 126	Էլ. ավտոմատ անջատիչի կարգավորում 1 հատ, (1 հետադարձ փականի և 1 բարձր ճնշման փոխում)
10	Ն.Տիգրանյան 19/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
11	Վահրամ Փափազյան 11 - 39	Պոմպի աշխատանքի կարգավորում
12	Ֆրիկ 4-35	Պոմպի աշխատանքի կարգավորում
13	Հակոբյանի 1 - 163	Պոմպի աշխատանքի կարգավորում
14	Վաղարշյան 1-3	Պոմպի վերանորոգում 1 հատ, (աշխատանքի գննում)
15	Ա.Սերոբ 10	Պոմպի վերանորոգում 1 հատ, Պոմպի աշխատանքի կարգավորում
16	Սոսե 2-րդ նրբ. 8	Պոմպի վերանորոգում 1 հատ, (Պ-ի աշխատանքի գննում)
17	Գյուլբենկյան 2/1	Պոմպի վերանորոգում 1 հատ, (Պ-ի աշխատանքի գննում)
18	Կոմիտաս 12	Պոմպի վերանորոգում 1 հատ, (պոմպ 1հատ, եռաֆազ թողարկիչ 1հատ, պոմպի միացման դետալներ պլաստիկ)
19	Ն. Տիգրանյան 21 - 27	Էլ. սարքերի գննում կարգավորում
20	Հակոբյան 11 - 54	պոմպի վերանորոգում 1 հատ, (Պ-ի աշխատանքի գննում)
21	Գյուլբենկյան 46 - 43	Պոմպի վերանորոգում 1 հատ, (Պ-ի աշխատանքի գննում)
22	Ազատության 3/1 - 54	Ջրագծերում ճնշման չափում և կարգավորում
23	Մունդուկյան 7	Ջրագծերում ճնշման չափում և կարգավորում
24	Մունդուկյան 3/1 - 23	Պոմպի վերանորոգում 1 հատ, (փոխվել է 1 ավտոմատիկայի կառավարիչ, 1 լիսեռ, 1 խցուկ)
25	Մունդուկյան 1	Բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, (Փոխվել է 1 բարձր ճնշման ռելե, 1 ցածր ճնշման ռելե, 1 թողարկիչ)
26	Մարշալ Բաղրամյան 25 - 55	Էլ. հոսանքի լարերի նորոգում երկ=0 մ
27	Մարյան 24 բ-13	Բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (փոխվել է 1 թողարկիչ, 1 ավտոմատիկայի կառավարիչ, 1բարձր ճնշման ռելե, 1 ցածր ճնշման ռելե, 1խցուկ)
28	Կորեայի ձոր	Հոսքաչափի մալուխի վերանորոգում
29	Վաղարշյան 1շ .	Ջրագծերում ճնշման չափում և կարգավորում
30	Մարյան 26 - 30	Փականի տեղադրում տր=0 մմ, 2 հատ, շարժիչ պոմպ ճկուն միացման փոխարինում 1 հատ, (Փոխվել է 2 հետադարձ փական, բաքի միացման դետալներ)
31	Աղբյուր Սերոբ 11	Պոմպի աշխատանքի կարգավորում

h/h	Պումպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
32	Փափագյան 13	Պումպի աշխատանքի կարգավորում
33	Ն. Տիգրանյան 54	Էլ. հոսանքի լարերի նորոգում երկ=0 մ
34	Ա.Խաչատրյան 23	ջրագծերում ճնշման չափում և կարգավորում
35	Ա.Խաչատրյան 24	ջրագծերում ճնշման չափում և կարգավորում
36	Սունդուկյան 1	Պումպի աշխատանքի կարգավորում
37	Վաղարշյան 1 - 55	Պումպի աշխատանքի կարգավորում
38	Կոմիտաս 48/1 - 21	Պումպի աշխատանքի կարգավորում
39	Գուլակյան 16բ	Բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, էլ. սարքերի զննում կարգավորում, (1h ավտոմատիկայի կառավարիչ, 1h բարձր ճնշման ռելե, 1h ցածր ճնշման ռելե,)
40	Ավետիսյան 67	Պումպի աշխատանքի կարգավորում
41	Օրբելի 63/1	Պումպի աշխատանքի կարգավորում
42	Համբարձումյան 18	Պումպի աշխատանքի կարգավորում
43	Կոմիտաս 8 -71	Պումպի աշխատանքի կարգավորում
44	Հակոբյան 7	Պումպի աշխատանքի կարգավորում
45	Հ.Էմինի 5	Պումպի աշխատանքի կարգավորում
46	Հ.Էմինի 80	Պումպի աշխատանքի կարգավորում
47	Կոմիտաս 19/8	Պումպի աշխատանքի կարգավորում
48	Կոմիտաս 38/1	Պումպի աշխատանքի կարգավորում
49	Կոմիտաս 14 - 40	Պումպի աշխատանքի կարգավորում
50	Բաղրամյան 70	Պումպի վերանորոգում 1 հատ, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (1 ցածր ճնշման ռելեի, 1բարձր ճնշման ռելեի, 1վերանորոգման հավաքածուի փոխարինում)
51	Օրբելի 63/1 բն. 40	Էլ. սարքերի զննում կարգավորում
52	Հ.Էմին 5,7	Պումպի աշխատանքի կարգավորում
53	Սամիկոնյանց 27	Պումպի աշխատանքի կարգավորում
54	Սամիկոնյանց 27 բն. 20	Պումպի աշխատանքի կարգավորում
55	Կոմիտասի 1	Պումպի վերանորոգում 1 հատ, (1 ցածր ճնշման ռելե, 2առանցքակալ)
56	Ա.Սերոբ 11/1	Պումպի աշխատանքի կարգավորում
57	Վաղարշյան 1,3	Պումպի աշխատանքի կարգավորում
58	Գուլակյան 16/2 - 31	Պումպի աշխատանքի կարգավորում
59	Փափագյան 16ա բն. 48	Պումպի աշխատանքի կարգավորում
60	Կոմիտաս 1 - 48	Պումպի աշխատանքի կարգավորում
61	Ադոնց 17 - 35	Պումպի աշխատանքի կարգավորում
62	Վրացական 6 - 14	Պումպի աշխատանքի կարգավորում
63	Արաբկիր 17Փ. 25 - 43	Էլ. սարքերի զննում կարգավորում
64	Սարյան 20/1(24)	Պումպի աշխատանքի կարգավորում
65	Դեմիրճյան 33շ	Պումպի աշխատանքի կարգավորում
66	Ֆրիկ 2,4 - 14	Պումպի աշխատանքի կարգավորում, (ռետինե խողովակ միացման դետալներով,1h վերանորոգման հավաքածու,1h մեմբրան 200լ,1h ավտոմատ անջատիչ)
67	Վ. Համբարձումյանի 12 (47)	Պումպի աշխատանքի կարգավորում
68	Վ. Վաղարշյանի Ի 3 - 62	Պումպի աշխատանքի կարգավորում
69	Հակոբյան 2/108 - 10	Պումպի աշխատանքի կարգավորում
70	Սամիկանոնյան 29	Էլ. սարքերի զննում կարգավորում, (2h թողարկիչ,2hթերմոռելե,շարժիչի վերանորոգում,1h վերանորոգման հավաքածու)
71	Վրացական 6	Պումպի աշխատանքի կարգավորում
72	Սունդուկյան 15/1	Պումպի աշխատանքի կարգավորում
73	Գյուլբենկյան 2/1 - 19	Էլ. սարքերի զննում կարգավորում
74	Համբարձումյան 47շ	Էլ. սարքերի զննում կարգավորում
75	Վաղարշյան 1,3	Էլ. սարքերի զննում կարգավորում
76	Սունդուկյան 27շ	Էլ. սարքերի զննում կարգավորում
77	Վրացական 6շ	Էլ. սարքերի զննում կարգավորում
78	Ա.Տիգրանյան 3	Ջրագծերում ճնշման չափում և կարգավորում
79	Ազատության 6	Ջրագծերում ճնշման չափում և կարգավորում
80	Քանաքեռ 14փ. 44շ	Էլ. համակարգի վերանորոգում, (1h վերանորոգման հավաքածու,1h լիսեռ,1h թերմոռելե)
81	Ռուբինյանց 23 - 41	Էլ. սարքերի զննում կարգավորում
82	Ահարոնյան 18	Շարժիչի փոխարինում 1 հատ, (շարժիչի վերանորոգում, 1h վերանորոգման հավաքածու, 2h առանցքակալ)
83	Դրոյի 14/1 - 24	Պումպի աշխատանքի կարգավորում
84	Հալաբյան 38 - 54(Սարգսյան 7)	Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ
85	Հալաբյան 9/1	Ջրագծերում ճնշման չափում և կարգավորում, Պումպի աշխատանքի կարգավորում
86	գ.Քանաքեռավանի հոսքաչափ	Էլ. սարքերի զննում կարգավորում
87	գ. Զովունի	Էլ. հոսանքի լարերի նորոգում երկ=0 մ

h/h	Պոմպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
88	գ. Պոռոջյան Երկաթգծի թաղ. 1/7	Էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ, (2կնդեաստոր)
89	Սիլիկյան թաղ. 7 փ 0 - 70 քոթեջներ	Պոմպի աշխատանքի կարգավորում
90	Սիսակյան 22/1	Պոմպի վերանորոգում 1 հատ, (ճնշումային բաքի փոխարինում 300լ)
91	Շինարարներ 15/2 - 129	Պոմպի աշխատանքի կարգավորում
92	Շինարարներ 6/1	Էլ. սարքերի գնում կարգավորում, (2հ եռաֆազ թողարկիչ, 1հ բարձր ճնշման ռելե)
93	Սիլիկյան թաղ. 7 Փ. 0 - 70 քոթեջներ	Էլ. սարքերի գնում կարգավորում
94	Աշտարակի խճ	Էլ. սարքերի գնում կարգավորում, (հոսքաչափի մալուխի կարգավորում)
95	մ.Կոտայք ք.Չարենցավան 1ա թաղամաս 2-րդ շ	Պոմպի վերանորոգում 1 հատ, (փոխվել է 1հ բանվորական անիվ, 1հ լիսեռ, 2հ առանցքակալ)
96	մ.Կոտայք ք.Չարենցավան	Էլ. սարքերի գնում կարգավորում
97	մ.Կոտայք ք.ԾՄԱՂԿԱՁՈՐ	Էլ. հոսանքի լարերի նորոգում երկ=0 մ, (Պոմպի և էլ.սարքերի գնում, կարգավորում)
98	մ.Կոտայք գ.Քաղսի	պոմպի վերանորոգում 1 հատ
99	մ.Կոտայք ք.Հրազդան	Էլ. սարքերի գնում կարգավորում, (2հ հետադարձ փական, 1հ թողարկիչ)
100	մ.Արմավիր գ.Արգավանդ	Էլ. հոսանքի լարերի նորոգում երկ=0 մ, (Հոսքաչափի էլ.մալուխի վերանորոգում)
101	Լենինգրադյան 31/2 - 23	Էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, (Փոխվել է 1 ցածր ճնշման ռելե, 1 եռաֆազ թողարկիչ)
102	Լենինգրադյան 31/8	ջրագծերում ճնշման չափում և կարգավորում, Պոմպի աշխատանքի կարգավորում
103	Թախրով /հոսքաչափ/	Էլ. հոսանքի լարերի նորոգում երկ=0 մ, (էլ.սարքերի վերանորոգում)
104	Լեբնինգրադյան 31/6 - 35	Ջրագծերում ճնշման չափում և կարգավորում, Պոմպի աշխատանքի կարգավորում
105	Լենինգրադյան 31/4 - 17(լենինգրադյան 31)	Էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ, (և փոխվել է 1 լիսեռ)
106	Լենինգրադյան 31/6 - 25	Փականի տեղադրում տր=0 մմ, 2 հատ, (2 հետադարձ փականի տեղադրում)
107	Ա-3թաղ. 16շենք	Փականի տեղադրում տր=0 մմ, 1 հատ, էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, (1 հետադարձ փականի, 1 թողարկիչի փոխարինում)
108	Սիսակյան 22 Շ	Էլ. սարքերի գնում կարգավորում, (1հ անցում, 1հ ֆազի բացակայության ռելե, 1հ թերմոռելե)
109	Տիչինա 34 - 16	Պոմպի աշխատանքի կարգավորում
110	Չորաղբյուր ՕԿՁ	Արտաքին լուսավորության և էլ. հաղորդալարերի կարգավորում
111	Բեռնակիրների 85ա	Մեքենա-մեխանիզմներ բաժնի համար պատրաստվել է երկարացման լար, օգտագործվել է լար հոսանքի 2 x 2,5
112	Գ. Նժդեհի 8	Ավտոմատ անջատիչի աշխատանքի կարգավորում
113	Վ. Շենգավիր 2 փ 22/1	Թողարկիչի աշխատանքի կարգավորում
114	Արամուս պոմպակայան	63Ա ավտոմատ անջատիչի փոխարինում
115	Արցախի 14	Ավտոմատ անջատիչի աշխատանքի կարգավորում
116	Մուրացան 192	32Ա ավտոմատ անջատիչի փոխարինում
117	Պուշկինի 3	D=32մմ SGL փականի փոխարինում
118	Բեռնակիրների 85ա	1.2մ լուսատուի տեղադրում
119	Բեռնակիրների 85ա	Կատարվել է էլ. հաղորդալարերի կարգավորում
120	Նալբանդյան 25/1	Պոմպը սնուցող փասսված էլ. մալուխի վերանորոգման համար օգտագործվել է 40 գծ/մ մալուխ
121	Բագրատունյաց 7	Ավտոմատ անջատիչների աշխատանքի կարգավորում
122	Իսրաելյան 37	Փականներից ջրի արտահոսքի կանխում
123	Արարատյան 5, 7	Ավտոմատ անջատիչի աշխատանքի կարգավորում
124	Պուշկինի 3	Էլ. աղորդալարերի կարգավորում
125	Արցախի 14,18	Ավտոմատ անջատիչի աշխատանքի կարգավորում
126	Արտաշիսյան 63	Մուտքագծից ջրի արտահոսքի կանխում
127	Իսրաելյան 37	Ավտոմատ անջատիչի աշխատանքի կարգավորում
128	Բագրատունյաց 39	Մուտքի փականից ջրի արտահոսքի կանխում
129	Բագրատունյաց 22/1	D=65մմ փականից ջրի արտահոսքի կանխում
130	Արտաշիսյան 50	Ավտոմատ անջատիչի աշխատանքի կարգավորում
131	Քոչարի 5, 7	Ֆազի պաշտպանիչի անսարքության կարգավորում
132	Արցախի 20/1	Ավտոմատ անջատիչի աշխատանքի կարգավորում
133	Խարբերդի պ/կ	Էլ. հաղորդալարերի և արտաքին լուսավորության կարգավորում
134	Ֆրունզե 8-10	Ջրի ճնշման ստուգում և կարգավորում
135	Աբովյան պուրակ ՕԿՁ	Արտաքին լուսավորության կարգավորում
136	Էրեբունի հրապարակ	Էլ. փականի էլ. վահանակի հոսանքազրկում
137	Մարյան թաղ.	Պոմպը սնուցող փասսված էլ. մալուխի վերանորոգում
138	Արշակունյաց 42/3	Տեղամասի սենյակում տեղադրվել է լուսատու 1.2 մ
139	Արշակունյաց 50	Ավտոմատ անջատիչի աշխատանքի կարգավորում



1.6 Մեքենա-մեխանիզմներ

Հունիս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

Շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հունիս ամսվա ընթացքում նորոգվել են թվով 8 մեքենաների շարժիչները մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 5 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորերով:

Վերանորոգվել են թվով 6 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուսի լարեր, ուղեներ, վառոցքի բանալիներ:



Թվով 6 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բեռնեքսները:

Նորոգվել է թվով 2 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնասնիփսերը, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 11 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճուպանները: Թվով 16 անվաղողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են: Թվով 12 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման ուղեներ խողովակներ: Առջևի համակարգի նորոգում է կատարվել թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել են գնդավորներ, ղեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ:

Հետևի համակարգի նորոգումներ են կատարվել թվով 3 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկներ, ատամնասնիփսեր, առանցքակալներ, կիսատնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 8 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Վերանորոգվել են, փոխարինվել են թվով 6 մեքենաների և էքսկավատորների բարձր ճնշման ուղեներ խողովակներ: Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 7 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 2 մեքենաների վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուրկիներ:

Փոխարինվել են թվով 45 մեքենամեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր և զտիչներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 8 մեքենամեխանիզմների վրա:

Մնուցման և գազի համակարգի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենաների վրա, փոխարինվել են ժիգլորներ, ներդիրներ, ասեղներ, բարձր ճնշման շտուգերներ, լիցքավորման հետադարձ փականներ:

Թվով 2 մեքենաների ուժեղացուցիչներ վերանորոգվել են, փոխարինվել են ատամասանիժներ, առանցքակալներ, խտաբուկեր, ներդիրներ:

Փոխարինվել են ժիգլորներ, ներդիրներ, ասեղներ, բարձր ճնշման շտուգերներ, լիցքավորման հետադարձ փականներ:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենամեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգածողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամասանիժներ, առանցքակալներ, կիսաառնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





2.1. Բաժանորդների տվյալներ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել աղյուսավետ կազմակերպման համար ԵՏՍՏ-ում ներգրավվել են 183, իսկ ՄՏՍՏ-ում 127 պայմանագրային աշխատակիցներ: 01.07.2018թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՏ-ում 209.929 (մոտ 66.7%), իսկ ՄՏՍՏ-ում 164.998 (մոտ 80.5%), նոր պայմանագրեր:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Ծառայություններ ստացող բաժանորդների թիվը	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	300.652	201.176	66.9
		Իրավաբանական անձ	14.425	8.753	60.7
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	196.850	158.798	80.7
		Իրավաբանական անձ	8.116	6.200	76.4
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	497.502	359.974	72.4
		Իրավաբանական անձ	22.541	14.953	66.3

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հունիս ամսվա դրությամբ բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Գործող բաժանորդների ընդհանուր քանակը	Ծախսող բաժանորդների քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	396.029	300.652	75.9
		Իրավաբանական անձ	19.821	14.425	72.8
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	313.592	196.850	62.8
		Իրավաբանական անձ	12.908	8.116	62.9
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	709.621	497.502	70.1
		Իրավաբանական անձ	32.729	22.541	68.9

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 503 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՏ սպասարկման տարածքում՝ 228 նոր բաժանորդ:

2.2. Հասույթ


Շարունակվում է կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազմակերպի գգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս հասուն դիտահորերում, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունները:


Բոլոր փոխարինված ջրաչափերը ուղարկվում են լաբորատոր ստուգաչափման: Հունիս ամսվա ընթացքում ԵՏՍՏ-ում ստուգաչափվել է 2967, իսկ ՄՏՍՏ-ում՝ 681 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	06.2018թ. ստուգաչափված ջրաչափերի քանակը	Սարքին	Անսարք	Միջամտած
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	2888	2109	569	210
2		Իրավարանական անձ	79	46	29	4
		Ընդամենը	2967	2155	598	214
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	581	315	190	76
2		Իրավարանական անձ	100	59	36	5
		Ընդամենը	681	374	226	81

Ստուգաչափված ջրաչափեր (Երևան)



Ստուգաչափված ջրաչափեր (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասը ունեն խնդիրներ: «Միջամտած» ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Լաբորատոր ստուգաչափման արդյունքում անսարք և միջամտած ջրաչափերի մասով ընթացիկ ամսում Բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել 111.244մ³ վերահաշվարկված հասույթ:

Ստորև, գրաֆիկային տեսքով, բերված է 2018թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)




2018թ. հունիս ամսին Ընկերության Առևտրային Տնօրինությունների կողմից ձևավորված հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.


Տարածաշրջան	Ամիս	Առաջադրանք հազ.մ²	Փաստացի հազ.մ²	Տարբերություն %, հազ.մ²
Երևան	Հունիս	6.862	7.098	3.43
Մարզեր		3.579	3.301	-7.78
Ընդամենը		10.441	10.398	-0.41

Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



2.3. Գանձում

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հունիս ամսին գանձումը ԵՏՍՍ-ում կազմել է 1.173 մլն.դրամ, իսկ ՄՏՍՍ-ում՝ 501.6 մլն.դրամ:

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով Ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով, հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված՝ անհատական ջրամատակարարման դադարեցումներ, մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Գանձում	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Ընդամենը
Երևան	Առաջադրանք	1.145.130	1.136.846	1.124.295	1.092.631	1.164.996	1.256.334	6.920.232
	Հավաքագրում	809.156	950.219	1.113.310	961.906	1.171.895	1.173.069	6.179.555
	%	70.66	83.58	99.02	88.04	100.59	93.37	89.30
Մարզեր	Առաջադրանք	485.310	471.395	415.475	464.364	443.557	481.998	2.762.099
	Հավաքագրում	404.088	443.632	490.015	476.166	520.132	501.615	2.835.649
	%	83.26	94.11	117.94	102.54	117.26	104.07	102.66
Ընդամենը	Առաջադրանք	1.630.440	1.608.241	1.539.770	1.556.995	1.608.553	1.738.332	9.682.331
	Հավաքագրում	1.213.244	1.393.850	1.603.325	1.438.073	1.692.027	1.674.685	9.015.205
	%	74.41	86.67	104.13	92.36	105.19	96.34	93.11

2.4 Դեբիտորական պարտքեր

Տարածաշրջանների Առևտրային Տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում ԵՏՍՍ կողմից կնքվել է թվով 76 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 5.81մլն. դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՍ կողմից՝ թվով 45 պարտքի մարման ժամանակացույց, մոտ 2.0մլն. դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափսը և պարտատերերի ցուցակները ներկայացվում են Իրավաբանական վարչություն:

Ստորև, աղյուսակային տեսքով, ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը՝ ըստ քանակի և գումարի:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2018թ		Բավարարված		Մերժված		2017-2018թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
742	112703134	867	65974606	11	1201524	2383	25528482	372	20408025

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում, իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Պարտքը 01.07.2018թ. դրությամբ (մլն.դրամ)	Այդ թվում մայիս ամսվա հասույթ (մլն.դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	2.549,3	1.322,5
Բնակիչ-բաժանորդներ	1.677,0	805,2
Իրավաբանական անձեր	872,2	517,2
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	1.839,0	565,6
Բնակիչ-բաժանորդներ	1.512,4	422,1
Իրավաբանական անձեր	326,6	143,5
Ընդամենը, այդ թվում	4.388,3	1.888,1
Բնակիչ-բաժանորդներ	3.189,4	1.227,4
Իրավաբանական անձեր	1.198,9	660,7


Հարկ է նշել, որ Մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չի առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 108.49 մլն. դրամը կուտակվել է երկու բաժանորդներին՝ «Հաճն Զուր» ՀՈԱԿ-ին և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքին մեծածախ սակագնով մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց՝ պարբերաբար չվճարելու պատճառով:

2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Երևան)



2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 Ջրաչափեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.07.2018թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	386.629	298.720	77.26	19.282	14.420	74.78
	Առանց ջրաչափի	9.400	1.932	20.55	539	5	0.93
Մարզեր	Ջրաչափով	283.706	190.994	67.32	12.133	8.111	66.85
	Առանց ջրաչափի	29.886	5.856	19.59	775	5	0.65
Ընդամենը	Ջրաչափով	670.335	489.714	73.06	31.415	22.531	71.72
	Առանց ջրաչափի	39.286	7.788	19.82	1.314	10	0.76

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ տվյալների բազայում 01.07.2018թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	512.258	274.793	53.64	21.991	3.907	17.77
Մարզեր	330.185	81.069	24.55	13.972	1.718	12.30
Ընդամենը	842.443	355.862	42.24	35.963	5.625	15.64

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում նոր տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4.081, իսկ Մարզերում 1.573 հատ ջրաչափական սարք:

Այդ թվում ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 98 իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 74 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա: Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

Հասցե	Ջրաչափերի ընդամեն քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Շերամի	6,076	4,798	79.0
Սվաճյանի	1,461	1,193	81.7
Օհանովի	1,688	1,262	74.8
Զ.Անդրանիկի	382	301	78.8
Առևտրաբաշխման	4,247	2,302	54.2
Զրվեժ Մայակ թաղ.	1,891	1,453	76.8
Զրվեժ Բանավան	1,399	1,126	80.5
5 զանգված	6,333	3,175	50.1
7 զանգված	4,615	3,071	66.5
8 զանգված	3,412	2,000	58.6
ԸՆԴԱՄԵՆԸ	31,504	20,681	65.6


«Լոռի» տեղամասում Ընկերության Վարչական և Տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր: Հունիս ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են կատարվել թվով 9 հասցեներում, որտեղ առկա 2443 ջրաչափից հունիսին փոխարինվել է 1591 ջրաչափ (մոտ 65.1%):

Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

Հասցե	Ջրաչափերի ընդանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Ք.Վանաձոր, Բսահակյան	619	401	64.8
Ք.Վանաձոր, Բսահակյան 1 նրբ.	237	182	76.8
Ք.Վանաձոր, Բսահակյան 2 նրբ.	116	70	60.3
Ք.Վանաձոր, Ավետիսյան	74	48	64.9
Ք.Վանաձոր, Աղայան	514	373	72.6
Ք.Վանաձոր, Պ.Սևակի	162	102	63.0
Ք.Վանաձոր, Շինարարների	356	224	62.9
Ք.Վանաձոր, Ուսանողական	251	150	59.8
Գ.Գուգարք	114	41	36.0
ԸՆԴԱՄԵՆԸ	2,443	1,591	65.1

2.6 Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում


Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են ՏՏ տնօրինությանը ջրազրկում իրականացնելու նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:




Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	184	81.343	14.373.741
Մարզեր	246	111.573	18.642.051
Ընդամենը	430	192.916	33.015.792



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ








3.1. Ջրամատակարարման շարունակականություն

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի մայիս ամսվա շարունակականության տվյալները՝ 97.8%, որոնք 0.1%-ով ավել են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ: Մյուս բոլոր քաղաքների և գյուղական համայնքների համար ջրամատակարարման փաստացի տևողության և հայտարարված գրաֆիկների միջև դեռևս առկա է զգալի տարբերություն:


Ջրամատակարարման շարունակականություն (Երևան)




Հաշվետու ամսվա ընթացքում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինություններում թվով 46 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 9-ը անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից: Ստորև ներկայացված են կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները.




Դավիթաշեն 2-րդ թաղ. 4ա շ.




Էրեբունի գանգված 27 շենք




Այվազուկսի - Մամարացի խաչ.



Գ. Արզախանդ



Մարաշ 7 և 17 փող. խաչ.




Ս.թ. հունիս ամսին շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից ուսումնասիրություններ են կատարվել Ծաղկաձոր քաղաքը սնող «Թեղենիս» ջրատար համակարգի վրա: Մասնավորապես, ուսումնասիրվել է ջրաղբյուրից փնջն 1-ին մարիչ հորն ընկած հատվածը: Աշխատանքների արդյունքում ջրատարի վրա հայտնաբերվել է օդի խցանում, որը վերացնելուց հետո ջրատարում ջրաքանակն ավելացել է 6 լ/վ-ով:



3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում

Հաշվետու ամսվա ընթացքում էներգովերահսկողության խմբի աշխատանքների, վերահսկողության, հաշվառման բարելավման և պոմպերի աշխատանքի դադարեցման արդյունքում էլ.էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 17.876կՎտ/ժ (3.83%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ստորև ներկայացված են հունիս ամսվա ընթացքում շեղում ունեցող հասցեներից որոշները.


Հասցե	Կատարված աշխատանք	Ամսական կՎտ/ժամ
Ք. Շիրակ, Մայիսյան ՕԿՁ	Հաշվիչի սխալ աշխատանք	2700
Ք. Շիրակ, Շիրակացի 52	Հավելագրում	205
Ք. Շիրակ, Սևյան 22	Հավելագրում	1049
Ք. Շիրակ, Դանդիլյան 25,27	Հավելագրում	709
Ք. Էջմիածին, Դազ. և Բազմ. Բլրակայաններ	Հավելագրում	212
Ընդամենը		4875

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 213 հասցե: Թվով 5 պոմպակայանում հայտնաբերվել են հավելագրումներ: Այդ մասին տեղեկացվել են ՀԷՑ ՓԲԸ-ի համապատասխան ծառայությունները՝ թերությունները վերացնելու համար:

● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ.էներգիայի ծախսը նվազել է 17.566կՎտ/ժ (46%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ. էներգիայի ծախսը նվազել է 8.146ԿՎտ/ժ (20%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




Հունիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 238.770կՎտ/ժ (12.18%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ.էներգիայի ծախսը նվազել է ամսական 521.030կՎտ/ժ (19.33%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 810.263կՎտ/ժամ կամ (14.12%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՏՀ խմբի կատարած աշխատանքներ


- Տեղամասերի սպասարկման տարածքներում իրականացված վթարավերականգնողական աշխատանքների շրջանակներում ջրագծերի և կոյուղագծերի քարտեզագրում՝ ըստ երկարությունների:
- Բազայի թարմացում շահագործումից հանված, ինչպես նաև կառուցված ջրագծերի վերաբերյալ:
- ՏՏ-ների տարածքներում իրականացված վթարավերականգնողական աշխատանքների քարտեզի ստեղծում, որը հնարավորություն է տվել իրականացված աշխատանքների մասին վիզուալ պատկերացում կազմել ու համեմատել կատարված աշխատանքների արդյունքերը:
- ՏՏ-ների ինժեներների կողմից ներկայացրած ջրամատակարարման և ջրահեռացման ցանցում իրականացրած աշխատանքների համակարգում, համապատասխան գծագրերի կազմում և մուտքագրում ԱՏ համակարգ:
- A0 ձևաչափով Մաշտոց տեղամասի թվով 5 քարտեզի տպագրում՝ տեղամասային ջրագծերի ճշտման նպատակով:

- ՀՀ տարածքում տեղադրված (առկա, ոչ առկա, սարքին, անսարք) ծախսաչափերի շերտի կառուցում USZ-ում:
- Ուշի գյուղի թվայնացում USZ-ում՝ ելնելով «Google Earth»-ում առկա տեղեկատվությունից:
- Քլորակայանների, պոմպակայանների և ՕԿՁ-ների տվյալների բազայի ստուգում և նոր տվյալների բազայի ստեղծում կատարելով համեմատություն USZ-ում առկա տեղեկատվության և առկա կատարողականներում եղած տեղեկատվության միջև (ներառված են Օտղկաձոր, Ապարան, Դիլիջան, Հրազդան, Նոյեմբերյան, Աբովյան և Թալին քաղաքներն ու Քարաշամբ, Աղձք, Ուրցաձոր և Օշական գյուղերը):
- «Բնտերակտիվ» համակարգում տեղամասերի մասնագետ-տեսուչների հետ իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում: Հավաքագրված տեղեկատվության ներմուծում US համակարգ և փոխանցում Առևտրային տնօրինությանը՝ բաժանորդների տվյալների բազայի թարմացման նպատակով: Բաժանորդների տեղադիրքերի ճշտման աշխատանքների մեկնարկ Աշտարակ քաղաքում. 1711 ֆիզիկական բաժանորդի տեղադիրքի ճշտում Աշտարակ քաղաքում, իսկ Երևան քաղաքում՝ 38 ֆիզիկական բաժանորդի:
- Երևան քաղաքի բաժանորդների ֆիզիկական և իրավաբանական կողերի առանձնացում՝ ըստ SS-ների, ջրամատակարարման գոտիների, լոգերների գոտիների և ջրատարների:
- Նոյեմբերյան քաղաքի ջրամատակարարման սխեմայի գծագրում «Auto CAD» ծրագրով:
- «Արևելք» և «Արևմուտք» SS-ների սպասարկման տարածքում գտնվող գյուղերի և համայնքների ճշտում, վերաթարմացում USZ-ում:
- Լոգերների տեղադիրքի ճշտում ՀՀ տարածքում և US-համակարգում, նոր տվյալների բազայի շերտի ստեղծում:
- USZ-ում տվյալների բազայի ստեղծում՝ ՀՀ տարածքում տեղադրված պոմպակայանների տեղադիրքերի ճշտված տեղեկատվության հիման վրա: «Excel» ձևաչափով լրացված տեղեկատվության տրամադրում ըստ պահանջի:
- Թարմացված տվյալներով «Arc Reader» ծրագրային փաթեթի համար «*. pnmf» ծրագրային փաթեթի ստեղծում՝ USZ-ի հետագա աշխատանքները շարունակելու նպատակով:
- Համայնքներում բնակվող և սպասարկվող բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում՝ հիմք ընդունելով 2017թ. ՀՀ վիճակագրական ծառայության կայքում հրապարակված տվյալները:
- «Մայմեխ», «Գիծ սար» և «Ղազանչի-Գյումրի» ջրատարների գծագրում «Google Earth»-ում դրանց համապատասխան մարիչ հորերի տեղադիրքերի տեղայնացումով, որից հետո ստեղծված «KMZ»-ի տեղափոխում US համակարգ՝ հայերեն պիտակավորմամբ:
- «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող տարածքներում (Շիրակի, Լոռի) US բազայում առկա կոյուղագծերի, փականների, դիտահորերի, ՕԿՁ-ների վերաբերյալ «Autocad» ձևաչափով եղած տեղեկատվության տեխափոխում «ArcGis» ծրագրային փաթեթ՝ բազաներ ստեղծելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում կատարվում է գծային տեղեկատվությունից անցում կետային տեղեկատվության, այնուհետև ամբողջ տեղեկատվությունը միավորվում է մեկ շերտում՝ ըստ գործառնական նշանակության:
- Երևան քաղաքի կոյուղագծերի թվայնացում հիմք ընդունելով սպասարկման տեղամասի կողմից տրամադրած հատակագծերը, որոնց վաղեմությունը հաշվի առնելով և առկա անճշտություններից խուսափելու համար կոյուղագծերի ճշտումը կկատարվի տեղամասում՝ այցի և հարցման տարբերակով կամ երկրատեղեկատվական շտեմարանում առկա տեղեկատվության արտատպմամբ US համակարգ:
- Բաժանորդների տվյալների բազայի թարգմանություն հայերենից-անգլերեն, ինչպես նաև համապատասխան աշխատանքների արդյունքում տվյալների բազայի լրացում:

3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ


Հաշվետու ամսում կարգավարների խումբը «SCADA» և «LOCATOR» համակարգերի միջոցով առցանց կառավարել է և հետևել «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների անխափան աշխատանքին, ջրամբարների լցվածությանը, ճնշումային լոգերներին, ջրաչափական սարքերի աշխատանքին և բաշխիչ ցանցի ջրում առկա մսացորդային քլորի համապատասխանությանը սահմանված չափաբաժնին: «Արզնի» պոմպակայանից երկու ջրատար համակարգերի միջոցով ք. Երևան է մղվում ընդհանուր 1480լ/վ ջուր, որից 890լ/վ ջրաքանակը ինքնահոս եղանակով քաղաք է հասել «Արզնի 1» ջրատարով, իսկ մնացած 590լ/վ ջրաքանակը մատակարարվել է «Արզնի 2» ջրատարի միջոցով, որից 290լ/վ ջրաքանակը մղվել է մեխանիկական եղանակով (2 պոմպերի միջոցով), իսկ մնացած 300լ/վ ջրաքանակը ինքնահոս եղանակով: «Արզնի 1» ջրատարի վրա Երևան քաղաքի սահմաններում տեղադրված «Արզնի 1 մորիս» ջրաչափը սովորաբար ֆիքսել է 600լ/վ ջրաքանակ, այսինքն՝ «Արզնի» պոմպակայանից «Արզնի 1» ջրատարով դեպի նշված տարածք տարանցիկ սպառումը կազմել է 290լ/վ, իսկ վթարի հայտնաբերման օրը «Արզնի 1 մորիս» ջրաչափի ցուցմունքը 600լ/վ-ից նվազել է հասնելով 170լ/վ-ի, մինչդեռ «Արզնի» պոմպակայանում «Արզնի 1» ջրատարի ջրաչափը ֆիքսել է 890լ/վ, իսկ վթարի մեծությունը կազմել է 430լ/վ: Այդ մասին տեղեկացվել է ջրատար համակարգերի կարգավարման խմբին, որի կողմից հայտնաբերվել է վթարի ստույգ վայրը: «Արևմուտք» SS-ի աշխատակիցների կողմից վթարը պետք է վերացվեր զոդման աշխատանքների

միջոցով, սակայն մինչ վթարը վերացնելն անհրաժեշտ է եղել «Արզնի» պոմպակայանից «Արզնի 1» ջրատարի ջրաքանակը նվազեցնել: Այդ նպատակով «Արզնի» պոմպակայանում հեռակառավարման միջոցով բացվել է «Արզնի 1» և «Արզնի 2» ջրատարների միջանկյալ փականը, ինչի արդյունքում «Արզնի 1» ջրատարից 300լ/վ ջրաքանակ ուղղվել է դեպի «Արզնի 2»: Դրանից հետո հնարավոր եղավ իրականացնել գոդման աշխատանքներ: Ստորև ներկայացված է «Արզնի 1 մորիս» ջրաչափի գրաֆիկական պատկերը.



**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԻՍԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳ**





4.1. Համակարգչային ցանց

Հունիս ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ համակարգչային և ցանցային աշխատանքները.

- Իրականացվել է ակտիվ աջակցություն բոլոր «veolia.com» էլեկտրոնային նամակագրության հասցե ունեցող օգտագործողներին՝ «Preserve» պիտակով էլեկտրոնային նամակների պիտակավորման գործընթացի շուրջ:
- Անցկացվել է դասընթաց «M2C» նախագծի շրջանակներում, որի ընթացքում քննարկվել են նախնական հարցերը առկա սերվերային միջավայրի «Ամպային» միջավայր տեղափոխման մասին:
- «Վեոլիա իմբի» կողմից տրամադրվել է «Intrinsec» ծրագրային ապահովման մուտքի և աշխատանք իրականացնելու արտոնություններ: Այդ ծրագրային ապահովման միջոցով իրականացվում է
 - ▶ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ինտերնետից հասանելի IP հասցեների և այդ հասցեներով հասանելի ծառայությունների գնումներ՝ անվտանգության խոցելիությունների բացահայտման համար:
 - ▶ Տրամադրվում է այդ խոցելիությունների վերացման համար անհրաժեշտ քայլերի հերթականությունների նկարագրություն:
 - ▶ Վերահսկվում է ինտերնետում հայտնվող նորություններ, որոնք կապված են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի անվան հետ և տեղեկացնում է այդ նորությունների մասին (չի գործում սոցիալական ցանցերի համար):
 - ▶ Վերահսկվում է ինտերնետում հայտնվող կայքերը, որոնք իրենց անվան կամ բովանդակության մեջ փորձում են օգտագործել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի անվանումը, դրոշմապիտակը, կայքանվան համահնչությունը, կամ այլ նմանատիպ միջոցները՝ կազմակերպության բարեհամբավը օգտագործելու, կամ անվանը ֆասս պատճառելու նպատակով (օրինակ՝ բացել կեղծ - «veoliadjur-shop.am» կայք և այդ կայքի միջոցով որոշակի ապրանք վաճառել, օգտագործելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի անունը, դրոշմապիտակը և այլ):
- Փարիզում կայացած Տեղեկատվական Տեխնոլոգիաների սեփնարի ընթացքում քննարկվել են.
 - ▶ Տեղեկատվական Տեխնոլոգիաների և «SCADA» համակարգերի անվտանգության հետ կապված բազմաթիվ հարցեր:
 - ▶ Իրականացվել են պրակտիկ ցուցադրումներ համակարգերի մեջ անօրինական ներխուժման ցուցադրումով:
 - ▶ «Վեոլիա Խմբի» Տեղեկատվական Տեխնոլոգիաների անվտանգության հետ կապված պլանները մոտակա 2-3 տարիների համար և ստեղծվել է ճանապարհային քարտեզ և պլան:
 - ▶ «Ամպային» միջավայրի անցնելու պլանները և միջոցները:
 - ▶ GDPR (General Data Protection Regulation) կանոնները և ներդրման պայմանները:
- Տեղադրվել և ակտիվացվել է երկշերտանի վավերացման «DUO» համակարգ, «SCADA» համակարգի ինտերնետից հասանելի երկու սերվերների համար այդ սերվերների անվտանգության մակարդակի բարձրացման համար:
 - «Արթիկ» տեղամասի նոր հասցեում կատարվել են համակարգչային ցանցի մոնիտորինգի աշխատանքներ, կարգաբերվել են համակարգիչները, միացվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ աշխատանքային ցանցին:

4.2 Ինտերակտիվ համակարգ

- Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման իմբի կողմից կատարվել է մի շարք փոփոխություններ «Ինտերակտիվ» և «Փաստաթղթաշրջանառության» համակարգերում:
- Վարչական տնօրինության Իրավաբանական վարչության համար մշակվել և ավարտին է հասցվել նոր ծրագրային ապահովման առաջին փուլը, որով հնարավոր է որոշ առումով կառավարել վարչության գործառնությունները և ավտոմատացնել որոշ գործառնություններ:
- Առևտրային տնօրինությունների և Իրավաբանական վարչության համար ստեղծվել է միասնական ծրագրային ապահովում բաժանորդի պարտքի մարման ժամանակացույցի ձևավորման համար:
- Մի շարք հաշվետվություններ են տրամադրվել ՋՏՊ կոմիտեին և «Վեոլիա Ջուր» ընկերության որոշ ստորաբաժանումներին:


4.3 Բջջային օպերատորներ և ինտերնետ


Հաշվետու ամսվա ընթացքում Արթիկ քաղաքի Տոնականյան 24/6 հասցեում միացման է տրվել տվյալների հաղորդման օպտիկամանրաթելային կապուղի և «VoIP» տեխնոլոգիայով գծային հեռախոսակապ:

4.4. Նոր սարքավորումներ և ծրագրեր

Հաշվետու ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար Ներդրումների տնօրինության համար ձեռք են բերվել թվով 3 գերիզոր համակարգիչներ:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





● Ամռան առաջին ամիսը, ինչպես և պետք էր սպասել, շոգերի հետ միասին ամենուր ավելացրեց ջրի պահանջարկը: Ու քանի որ այն տեխնիկական պատճառներով հնարավոր չէր լիովին բավարարել, առաջին հերթին Երևանից դուրս բնակավայրերում, բնականաբար առաջացել էր սպառողների դժգոհություն, ինչն ավելացրել էր հասարակության ուշադրությունը «Վեոլիա Ջրի» աշխատանքի նկատմամբ:

Ավելին, հասարակությունը սկսել էր աննախադեպ պահանջկոտություն ցուցաբերել: Այս երևույթի պատճառն ակնհայտ է. Հայաստանում քաղաքական փոփոխությունները իրենց արտահայտությունը գտան նաև Օպերատորի նկատմամբ սպառողների վերաբերմունքում: Այն, ինչ բնական էր համարվում դեռ երեկ, այսօր արդեն մերժվում էր: Իրավիճակի հետ կապված «Վեոլիա Ջրի» պարզաբանումներն այլևս նրանց չէին գոհացնում:

Այս տրամադրությունները չէին կարող հաշվի չառնել զանգվածային լրատվամիջոցները, որոնք նույնպես ակտիվացրել էին իրենց առանց այդ էլ ակտիվ աշխատանքը:

Ընկերության Հանրային կապերի ծառայությունը իր մասով փորձել էր նորովի մոտենալ խնդրին ու որոշակիորեն փոխել աշխատանքը: Առաջին հերթին ուշադրություն էր դարձվել ՋԼՄ-ներից ստացվող ահազանգերին օպերատիվ պատասխանելուն՝ առկա դժգոհության ալիքը մեղմելու և Ընկերության մասին բացասական հրապարակումները նվազագույնի հասցնելու համար: Այս առումով, որոշակի աշխատանք է տարվել «ԱԹԻՎի» հեռուստաալիքի, «Ավրորա» ռադիոկայանի, «hetq.am» և «tert.am» լրատվամիջոցների հետ, որոնք ամենաակտիվ էին հունիսին: Ավելի նվազ քանակով, բայց միևնույն է զգալի հարցապնդումներ են ստացվել «Հանրային», «Երկիր Մեդիա», «Para TV», «Factor TV» հեռուստաալիքներից, «Փաստ», «Ժողովուրդ» և «Հայկական ժամանակ» օրաթերթերից, «news.am», «1in.am», «asekose.am», «lurer.com» լրատվամիջոցներից, մարզերում «Գյումրիի», «Շանթ» ու «Սյունիքի Չագեձոր» հեռուստաալիքներից: Արվել է հնարավորինս Ընկերության մյուս ծառայությունների հետ համագործակցությամբ սահմանված ժամկետներում պատասխանել նրանց հարցերին կամ լուծել բարձրացված խնդիրները:

Սակայն աշխատանքի ամենաթեժ տեղամասը հանդիսացավ «Վեոլիա Ջրի» պաշտոնական էջը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում: Չկարողանալով անմիջապես կապվել «1-85 հեռախոսային կենտրոն»-ի հետ, կամ չգոհանալով վերջինիս պատասխանից, ինչպես նաև ելնելով մեր «com@vjur.am» էլեկտրոնային փոստի ոչ բավարար օպերատիվ արձագանքից, սպառողներն իրենց հուզող բոլոր հարցերով դիմել են «Ֆեյսբուք»-ին: Օրական մի քանի տասնյակ դիմում էր ստացվում «Messenger»-ով կամ գրվում է էջի «Պատին»: Իսկ եթե հաշվի առնենք, որ ապրիլից սկսած մոտավորապես ամեն 20 օրը մեկ 1000-ով ավելանում է բաժանորդների քանակը, ակնհայտ է դառնում, որ այն քայլ առ քայլ վերածվում է «Վեոլիա ջուր – Հանրություն» կապի ամենաակտիվ և արդյունավետ միջոցի:

● Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ հունիսի 1-ին ՀՀ ԳԱԱ Երկրաբանության թանգարանի հետ կազմակերպվել էր ուսուցողական «Երկիր մոլորակն իմ տունն է» դաս-էքսկուրսիան: Դրան մասնակցում էին թանգարանի «Էկո ակումբի» և Երևանի Աջափնյակ վարչական շրջանի սոցիալական հոգածության կենտրոնի մոտ 50 սաներ՝ իրենց դաստիարակների ու ուսուցիչների հետ:



● Լուսաբանվել էր նաև երկու Գնումների գործընթացին և Սպասարկման որակին վերաբերող մասնագետների վերապատրաստման դասընթացները, հրապարակվել է Մասիսի տարածաշրջանի գյուղերում հոսանքի տատանումների և Երևանում շինաշխատանքներով պայմանավորված ջրանջատումների վերաբերյալ պարզաբանում:

● Դրանից բացի, հաշվետու ժամանակահատվածում նաև ապահովվել են բազմաթիվ հրապարակումներ պաշտոնական հանդիպումների, հյուրերի այցելությունների, Հնկերության ընթացիկ աշխատանքների ու ձեռքբերումների վերաբերյալ Հնկերության ֆեյսբուքյան էջում, «Veolia.am» կայքէջում, «Վեոլիա Ջրի» հետ համագործակցող թվով 5 թերթում, ինչպես նաև հանրապետության էլեկտրոնային լրատվամիջոցներում:



**ՈՐԱԿԻ,
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**





6.1 Փաստաթղթերի մշակում

● ՈԱԱ Ծառայությունը թարգմանել է և Ընկերության ղեկավար կազմին ներկայացրել «Վեոլիա Գրուպ»-ի Գլխավոր Գործադիր Տնօրեն՝ պրն. Անտուան Ֆրերոյի 15-ը հունիսի 2018 թվականին հրապարակված «Կանխարգելման, առողջության և անվտանգության հանձնառություն» ղեկլարացիան:

● ՈԱԱ Ծառայությունը, ի կատարումն ղեկավար կազմի հանձնարարականի, մշակել է «Աշխատատեղում անվտանգության և առողջության վիճակագրություն» ամփոփ հաշվետվությունը: Հաշվետվությամբ ներկայացվել են հետևյալ բաժինները

- ▶ Տեղական օրենսդրական պահանջները,
- ▶ Գործատուի պատասխանատվությունը աշխատատեղում տեղի ունեցած պատահարների համար, աշխատատեղում տեղի ունեցող պատահարներից ապահովագրությունը
- ▶ Աշխատատեղում տեղի ունեցած պատահարների վերաբերյալ ահազանգումը, գրանցումը, ուսումնասիրումը
- ▶ «Հունվար 2017 - Ապրիլ 2018» վիճակագրական տվյալներ:

● ՈԱԱ Ծառայությունը, ելնելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջներից, հաշվետու ամսվա ընթացքում մշակել է Ընկերության ՀՏԿ-ներում շահագործվող թվով 7 ամբարձիչ սարքավորումների (բազմաձախարակ/ կամրջակային կոունկ) տեխնիկական անվտանգության վկայագրերը:

● ՈԱԱ Ծառայությունը, ելնելով «ՀՍՏ 312-2009: Կազմակերպությունների էլեկտրատեխնիկական և էլեկտրատեխնոլոգիական անձնակազմերին էլեկտրաանվտանգության որակավորման խմբերի շնորհելու պայմաններ» ստանդարտի պահանջներից, մշակել է Ընկերության էլտնտեսությունները սպասարկող/ շահագործող անձնակազմերի մասնագիտական որակավորման դասընթացի տեխառաջադրանքը, որի հիման վրա Ընկերության Գնումների վարչությունը կազմակերպել է վերոգրյալ ծառայությունների/խորհրդատվության գնման մրցույթ:

6.2 Համագործակցություններ

● ՈԱԱ Ծառայության համակարգմամբ Տեխնիկական տնօրինության «Ջրաչափերի վերանորոգման ծառայության» թիմը մասնակցել է հունիսի 12-ին ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամում (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) անցկացրած ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությանը՝ «Հակառակորդի հարձակման դեպքում աշխատակիցների պաշտպանության կազմակերպումը» թեմայով:

Ուսումնավարժության նպատակն էր ստուգել արձագանքող ուժերի պատրաստվածությունը փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելիս, կատարելագործել ուժերի փոխհամագործակցությունը:

● Ղեկավարվելով ՀՀ Շիրակի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղպաշտպանության համակարգերի նախապատրաստման 2018 թվականի հիմնական միջոցառումների պլանի պահանջներով, «Արևմուտք» ՏՏ-ի «Շիրակ»



տեղամասի աշխատակիցների կողմից ՈԱԱ Ծառայության համակարգմամբ սույն թվականի հունիսի 13-ին իրականացվել է հատուկ տակտիկական ուսուճավարժություն (ՀՏՈւ), որի շրջանակներում ՈԱԱ Ծառայությունը «Արևմուտք» ՏՏ ղեկավար անձնակազմի հետ մշակել և հաստատել է ՀՏՈւ-ի անցկացման վերաբերյալ ներքին իրավական ակտը, անցկացման պլանը, օրացուցային պլանը և ամփոփագիրը:

● Սույն թվականի հունիսի 13-ին ՈԱԱ Ծառայությունում տեղի է ունեցել հանդիպում «ՄԱԴԵ» ԲԸ ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են «Վեոլիա Ջուր» և «Սադե» Ընկերությունների կողմից անվտանգության և առողջության կառավարման մոտեցումները, կատարվել է ԱԱ կառավարման նախնական գնահատում, քննարկվել են հետագա աշխատանքների վերաբերյալ հարցերը:

6.3. Արտադրական վտանգավոր օբյեկտների գրանցում/փորձաքննություն

ՈԱԱ Ծառայությունը, ելնելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջներից «ԴԱՄԻ» տեխնիկական անվտանգության ծառայություն ՍՊԸ-ի հետ մեկնարկել է Ընկերության հեղուկ քլորով շահագործվող թվով 42 քլորակայանի, 7 ամբարձիչ մեքենայի և 3 քլոր տեղափոխող մեքենայի (ԱՎՕ-ների) սահմանված կարգով Ռեեստրում գրանցման և տեխանվտանգության փորձաքննության կազմակերպման աշխատանքները:

6.4. Դասընթացներ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ 1-ին մասի բ) և դ) կետերի պահանջները՝ ՈԱԱ Ծառայությունը կազմակերպել է պայմանագրային հիմունքներով «Նարեկ Գիտահետազոտական» ՓԲԸ հավատարմագրված փորձագետների հետ Ընկերության քլոր տեղափոխող մեքենաների և 1000կգ և ավել բեռնաբարձությամբ ամբարձիչ մեքենաների «Տեխնիկապես սարքին վիճակի և անվտանգ շահագործման պատասխանատու անձանց թվով 7 աշխատակցի, ինչպես նաև Ընկերության հեղուկ քլոր տեղափոխող մեքենայի վարորդի՝ նոր ընդունված աշխատակցի մասնագիտական որակավորման դասընթացներ և գիտելիքների ստուգում:




ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ /ՀՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ժամանակակից սպասարկման ոլորտի ծավալվող բիզնես միջավայրում խիստ կարևոր է ունենալ որակյալ սպասարկման ծառայություն և ձգտել հասնելու յուրաքանչյուր բաժանորդի սպասարկման բավարարվածությանը: Նման պայմաններում կարևորվում են այն գիտելիքները, որոնք ուղղված են բացահայտելու բաժանորդների սպասարկմանը վերաբերող հարցերին որակյալ պատասխաններ տրամադրելու մոտեցումները: Անշուշտ, այս թրեյնինգները նպաստում են Ընկերության սպասարկման ոլորտի աշխատակիցների աշխատանքի որակի ու հաճախորդների բավարարվածության մակարդակի բարձրացմանը: Ուստի այս շրջանակներում սույն թվականի հունիսի 18-ին ՈԱԱ Ծառայությունը անցկացրել է Բաժանորդների սպասարկման գրասենյակի մասնագետների և 1-85 Հեռախոսակենտրոնի օպերատորների (ընդհանուր առմամբ 14 մասնակցի) վերապատրաստման դասընթաց/սեմինարներ «Մթերսի կառավարում» և «Բաժանորդների սպասարկման որակի չափորոշիչները» թեմաներով:




Մասնակիցների թիվն ըստ դասընթացների տիպի



- «1000 կգ և ավել բեռնաբարձությամբ ամբարձիչ մեքենայի (ԱՎՕ-ի) տեխնիկապես սարքին վիճակի և անվտանգ շահագործման պատասխանատու անձի մասնագիտական որակավորման դասընթաց»
- «Քլոր տեղափոխող մեքենայի (ԱՎՕ-ի) տեխնիկապես սարքին վիճակի և անվտանգ շահագործման պատասխանատու անձի մասնագիտական որակավորման դասընթաց»
- «1000 կգ և ավել բեռնաբարձությամբ ամբարձիչ մեքենայի (ԱՎՕ-ի) վարորդի մասնագիտական որակավորման դասընթաց»
- «Քլոր տեղափոխող մեքենայի (ԱՎՕ-ի) վարորդի մասնագիտական որակավորման դասընթաց»
- «Մթերսի կառավարում» դասընթաց-սեմինար
- «Սպասարկման որակի չափորոշիչներ» (Հաղորդակցման հնտություններ, սպասարկման էթիկետ, հեռախոսային էթիկետ) դասընթաց-սեմինար

2018թ. հունվար-հունիս ժամանակահատվածում առողջության և անվտանգության մասով կազմակերպված դասընթացների գրաֆիկ



6.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացող միջոցառումների կիրառում

Ելնելով Ընկերության ՀՏԿ-ներում և վարչական շենքերում անվտանգության և առողջության ռիսկերի գնահատման, կանխարգելիչ միջոցառումների կիրառման և աշխատակիցների անվտանգության մասով հրահանգավորման գործընթացի գնահատման, ինչպես նաև Ընկերության արտադրական վտանգավոր օբյեկտների տեխանվտանգության փորձաքննությունների նախապատրաստական աշխատանքների պատշաճ կազմակերպման անհրաժեշտությունից, Ծառայության անվտանգության պատասխանատուներն իրականացրել են պլանավորված անվտանգության ստուգայցներ՝ «Եզնակ», «Ապարան», «Հայկաշեն», «Արարատյան 1,2», «Մաքրավան 2», «Մաքրավան 4», «Հացառատ», «Մարուխան», «Գանձակ», «Արթիկ» սանիտարական գոտիներում (պումպակայաններում, քլորակայաններում, կապտաժային կառուցվածքներում) և Ընկերության թվով 35 կառուցվածքային ստորաբաժանումներում:

Կատարված ստուգայցների արդյունքները գրանցվել են հատուկ ստուգաթերթիկներում, որոնց հիման վրա մշակվել է անվտանգության ամփոփ հաշվետվություն:

Ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 3 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման՝ մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:





«ՎԵՈՒԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադունցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am

